ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՍԿԱՋՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ՎԱՐՔԻ ՏԵՍԱԿ

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Մելս Պարգևի Մկրտումյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Լիդա Ռազմիկի Արամյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ.-ի դեկտեմբերի 10-ին ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ.-ի նոյեմբերի 10-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումների, գիտության և տեխնիկայի նվաճումների դարաշրջանում ժամանակակից մարդու կյանքի անբաժանելի մասն է կազմում համացանցը: Ընդ որում, համացանցը հասանելի է հասարակության բոլոր շերտերին: Նույնիսկ ամենափոքր երեխաներն ունեն համացանցի անսահմանափակ ռեսուրսներից օգտվելու հնարավորություն՝ ստանալով տեղեկատվության ահռելի քանակ ու անվերահսկելիության մթնոլորտում գործելու հնարավորություն:

Ժամանակակից աշխարհում կիբերտեխնոլոգիաների դերն անփոխարինելի է բազմաթիվ ոլորտներում՝ կրթական, առողջապահական, բիզնես, զվարճանք, նույնիսկ՝ ռազմաքաղաքական: Պատահական չէ, որ խիստ շատացել են կիբերհանցագործությունները: Առաջնային նշանակություն ունի մեդիագրագիտությունը ոչ միայն անհատի ապահովության տեսանկյունից, այլև՝ ազգային անվտանգության, քանի որ համացանցի ոչ ճիշտ կիրառումը, տեղեկատվության արտահոսքը կամ կեղծ տեղեկատվության տարածումը կարող է ճակատագրական լինել ոչ միայն անձի, այլև՝ պետության համար:

Իհարկե, անհրաժեշտ է քայլել ժամանակին համընթաց, և ժամանակակից մարդը չի կարող բացառել համացանցի կիրառումը՝ հաշվի առնելով վերջինիս դերն ու կարևորությունը: Հասարակության շրջանում լայնամասշտաբ տարածում ունեն հատկապես սոցիալական ցանցերը, որոնց չափից շատ կիրառությունը կարող է հանգեցնել կախվածության, որն էլ իր հերթին ծնում է դեստրուկտիվ վարք՝ սուիցիդի դրսևորումներ, վարքային շեղումներ, դելիկվենտ վարք, ագրեսիվ վարք:

Սոցցանցերից կախվածությունն առավելապես սպառնում է դեռահասներին, քանի որ հենց այս խումբն ունի առավել մեծ ակտիվություն սոցիալական ցանցերում, որն էլ կարող է էապես ազդել նրանց վարքի, ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Սթրեսածին տեղեկատվությամբ հագեցած սոցիալական ցանցերը՝ իրենց բոլոր դրսևորումներով, ազդում են դեռահասների վարքի, անձի ձևավորման ու զարգացման, միջանձնային փոխհարաբերությունների, ինչպես նաև՝ նպատակների ու երազանքների վրա: Հետևաբար, սոցցանցերից կախվածությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ դեռահասների ֆիզիկական և հոգեկան առողջության վրա:

Համացանցը դեռահասի համար հաճախ հանդիսանում է իրական կյանքի որևէ խնդրից հոգեբանական խուսափման միջոց: Սոցիալական ցանցերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն օգտատերերին իրենց անձը ներկայացնելու լայն հնարավորություն է տալիս: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դեռահասներն առավել զգայուն են ուրիշների կարծիքների և գնահատականների հանդեպ, առավել հակված են «սենսացիաներ» կամ համախոհներ փնտրելու, իսկ առցանց շփման ժամանակ կարող են երևալ ավելի հաջողակ, ներգրավվել դերային խաղերի մեջ, հանդես գալ անանուն կամ կեղծ

կերպարով, վիրտուալ աշխարհը դառնում է չափազանց գրավիչ, որի հետ համեմատած իրականը կարող է թվալ անհրապույր և անհետաքրքիր:

Սոցիալական ցանցերից կախվածության արդյունքում շատերը չեն կարողանում իրենց կյանքն այլևս պատկերացնել առանց վիրտուալ շփման՝ միաժամանակ չգիտակցելով, որ գտնվում են ամբողջական կախվածության մեջ: Այսպիսի կախվածությունը նման է թմրադեղային կամ ալկոհոլային կախվածության: Բացի այդ, անձնական տեղեկատվության արտահոսքը, որով կիսվում են օգտատերերը, բազմաթիվ անցանկալի հետևանքների առաջացման ռիսկ է պարունակում:

Ուստի, հաշվի առնելով նշված հանգամանքները, սոցիալական ցանցերից կախվածության հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ որպես կախվածության համեմատաբար նոր տեսակի, առավել քան արդիական է և անհրաժեշտ:

Հետազոտության օբյեկտը դեռահասների սոցցանցերից կախվածությունն է:

Հետազոտության առարկան դեստրուկտիվ վարքն է՝ որպես սոցցանցերից կախվածության տեսակ:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել դեռահասների սոցիալական ցանցերից կախվածությունը որպես դեստրուկտիվ վարքի տեսակ, ինչպես նաև՝ վարքի այլ դեստրուկտիվ տեսակները և դրանց փոխկապվածությունը:

Հետազոտության խնդիրները. Հետազոտության նպատակի իրականացման համար անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին.

1. Ուսումնասիրել սոցիալական ցանցերից կախվածության և դեստրուկտիվ վարքի վերաբերյալ առկա տարբեր հեղինակների մոտեցումները:
2. Վերլուծել դեռահասների տարիքային առանձնահատկություններն ու ճգնաժամերի տեսությունները:
3. Փորձարարական ճանապարհով բացահայտել և առանձնացնել սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող դեռահասներին:
4. Համեմատական վերլուծություն իրականացնել սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող և չունեցող դեռահասների դեստրուկտիվ վարքաձևերի միջև:
5. Ուսումնասիրել դեստրուկտիվ վարքաձևերի փոխկապվածությունները:
6. Մշակել հոգեբանական խորհուրդներ և գործնական առաջարկություններ սոցիալական ցանցերից կախվածության կանխարգելման ուղղությամբ:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ գոյություն ունի որոշակի փոխկապվածություն սոցիալական ցանցերից կախվածության և դեստրուկտիվ վարքի այլ ձևերի միջև (սուիցիդալ վարք, դելիկվենտ վարք, ագրեսիվ վարք, առցանց խաղերից կախվածություն):

Մեթոդաբանական հիմքը: Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել Ա. Ադլերի, Զ. Ֆրեյդի, Է. Ֆրոմի, Է. Էրիքսոնի, Ռ. Լազարուսի, Վ. Մենդելևիչի, Է. Ազարովայի, Ց. Կորոլենկոյի, Ա. Բորոխովի, Ի. Կոնի և այլոց ադիկտիվ վարքի վերաբերյալ կատարած ուսումնասիրությունները, Մ. Նոքի, Ռ.

Բեսթի, Ք. Մկկոյի, Մ. Կումինգսի, Զ. Ֆրոյդի , Ա. Բանդուրայի, Է. Ֆրոմի և այլոց հայացքները դեստրուկտիվ վարքի վերաբերյալ, ինչպես նաև՝ դեռահասության տարիքի և առանձնահատկությունների վերաբերյալ Լ. Ս. Վիգոտսկու, Դ. Էլկոնինի, Լ. Ի. Բոժովիչի, Զ. Ֆրոյդի, Ա. Ֆրոյդի, Է. Էրիքսոնի, Ժ. Պիաժեի, Ս. Հոլլի տեսությունները:

Հետազոտության համար հիմք են ծառայել նաև մի շարք հայ հեղինակների՝ Ս. Արզումանյանի, Կ. Վարդանյանի, Ս. Գևորգյանի, Մ. Ավետիսյանի, մոտեցումներն ու գիտական հայեցակարգերը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության խնդիրների լուծման նպատակով կիրառել ենք հետևյալ մեթոդները՝ դիտում, զրույց, դեպքի ուսումնասիրություն, անկախ բնութագրերի ընդհանրացում, Պիրսոնի համահարաբերակցության վերլուծություն, ինչպես նաև թեստերի մեթոդը՝ Ք. Յանգի «Համացանցային կախվածության թեստը», «Անձնային ագրեսիվություն և կոնֆլիկտայնություն» մեթոդիկան՝ ըստ Ե. Պ. Իլինի և Պ. Ա. Կովալյովի, Մեծ հնգյակ թեստը՝ ըստ Ռ. Մակքրեյի և Պ. Կոստայի, Անչափահասների շեղվող վարքի ախտորոշման մեթոդիկան՝ ըստ Է. Վ. Լեուսի:

Հետազոտության տեսական նշանակությունը: Բացահայտված առանձնահատկությունները, օրինաչափություններն ու կատարած վերլուծությունները հարստացնում և ամբողջականացնում են թե՛ սոցիալական ցանցերի, դրանց հոգեբանական առանձնահատկությունների, կախվածության ձևավորման մեխանիզմների, թե՛ դեռահասների ադիկտիվ վարքի վերաբերյալ տեսական պատկերացումները, ինչպես նաև՝ նախադրյալ են ստեղծում հիմնախնդրի հետագա ավելի լայնածավալ հետազոտությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտությունը կնպաստի նոր գիտելիքների ձեռքբերմանը՝ կապված սոցիալական ցանցերի հոգեբանական ազդեցության ու առանձնահատկությունների հետ, կպատասխանի դեռահասների կողմից սոցիալական ցանցերի օգտագործման հետ կապված հատկապես ծնողներին, մանկավարժներին ու հոգեկան առողջության ոլորտում աշխատող մասնագետներին ներկայումս խիստ մտահոգող հարցերին: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել որպես ախտորոշիչ և կանխարգելիչ միջոց, ինչպես նաև համապատասխան մասնագետներն ու ծնողները կարող են լինել առավել պատրաստ և տեղեկացված՝ կախվածություն ունեցող դեռահասների հետ առնչվելիս:

Հետազոտության փորձաքննությունը և տվյալների հուսալիությունը: Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Կիրառական հոգեբանության» ամբիոնում և Երևանի «Հայբուսակ» համալսարանի «Բժշկական հոգեբանության» ամբիոնում: Հետազոտության արդյունքները քննարկվել են մի շարք միջազգային գիտաժողովներում՝ «Նորարարությունը բժշկության մեջ» (Ավանդական բժշկության համալսարան, Երևան, 2025), «Սոցիալական և հումանիտար կրթության պարադիգմի զարգացումը՝ որպես

ֆիզիկական դաստիարակության և սպորտի համալսարանի շրջանավարտների բարոյական իդեալների և քաղաքացիական դիրքի ձևավորման համակարգ» (Սանկտ Պետերբուրգ, 2024), «Գավառի պետական համալսարանի 27-րդ միջազգային գիտաժողով» (Գավառ, 2024), «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» (ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, 2024), «Կրթության և գիտության արդի հիմնախնդիրները» (Շիրակի պետական համալսարան, Գյումրի, 2024), «Լեզուն և անհատականությունը. սոցիալ-մշակութային և հոգեբանական վերափոխումներ» (Մոսկվա, 2023):

Փորձարարական հետազոտությունն իրականացրել ենք Երևանի Մովսես Ջանբազյանի անվան թիվ 79 հիմնական դպրոցում և Երևանի Սոս Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոցում: Հետազոտության ընտրանքը կազմել են դեռահասներ (n = 165)՝ 90 աղջիկ և 75 տղա, ուսուցիչներ և ծնողներ (n = 70):

Հետազոտության արդյունքների հավաստիությունը պայմանավորված է դեռահասների քանակով, տվյալների որակական և քանակական վերլուծությամբ, ինչպես նաև՝ կատարվել է նաև մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն Կ. Պիրոսոնի համահարաբերակցության գործակցի հաշվարկման միջոցով:

Ստացված արդյունքներն ու մեթոդական հանձնարարականները կիրառվել են Երևանի Մովսես Ջանբազյանի անվան թիվ 79 հիմնական և Երևանի Սոս Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոցներում դեռահասների, ծնողների և ուսուցիչների հետ իրականացված հոգեբանական թրեյնինգային աշխատանքներում:

Հետազոտության գիտական նորույթը: Իրականացված հետազոտությունը նորույթ է ինչպես սոցիալական, այնպես էլ տարիքային, ընդհանուր (անձնային առանձնահատկություններ), կլինիկական (կախվածություններ, շեղվող վարք) հոգեբանության բնագավառներում: Առաջին անգամ գիտական հետազոտության առարկա է դարձել սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող դեռահասների վարքային առանձնահատկությունները: Մյուս կողմից՝ առաջին անգամ գիտական ուսումնասիրության խնդիր է դարձել դեստրուկտիվ վարքը, վարքային տարբեր շեղումները, դրանց ծագման, զարգացման ընթացքի և վարքագծային դրսևորումների հոգեբանական և սոցիալ-հոգեբանական օրինաչափությունները: Սոցիալական ցանցերից կախվածության երևույթը դիտարկվում է ինչպես դեռահասների փոխհարաբերություններում, այնպես էլ՝ առանձնացվում է դրա ձևավորման պատճառներն և հաղթահարման ուղիները:

Սոցիալական ցանցերից կախվածության ձևավորման գործընթացը նոր հոգեբանական մեկնաբանություն է ստանում՝ դիտարկվելով դեռահասի անձնային առանձնահատկությունի տեսանկյունից, և բացահայտվում են այն կարևոր հոգեբանական օրինաչափությունները, որոնք ընկած են խնդրի ձևավորման և զարգացման հիմքում: Բացահայտվել է, որ սոցիալական ցանցերից կախվածությունն աստիճանաբար աճում է տարիքին զուգընթաց ինչպես

աղջիկների, այնպես էլ տղաների շրջանում: Հատկապես բարձր է միջին և ցածր մակարդակի կախվածություն ունեցողների թիվը: Դիտարկվել է, որ սոցիալական ցանցերից կախվածությունը խոչընդոտում է կրթական գործընթացի իրականացմանը: Համեմատական վերլուծության արդյունքում փաստվել է, որ առկա են անձնային և հոգեբանական առանձնահատկությունների էական տարբերություններ կախվածություն ունեցող և չունեցող դեռահասների մոտ: Ուսումնասիրվել է սոցիալական ցանցերում ամենատարածված խաղերը և բացահայտվել, որ դրանք կարող են ագրեսիվ վարքի պատճառ հանդիսանալ: Ուսումնասիրվել է սոցիալական ցանցերի կիրառման նպատակները, և ի հայտ են եկել զգալի տարբերություններ աղջիկների և տղաների կողմից սոցցանցերի կիրառման միջև: Բացահայտվել է փոխկապվածություն դեռահասների սոցիալական ցանցերից կախվածության և շեղվող վարքի միջև:

Այսպիսով, փորձարարական ճանապարհով ուսումնասիրվել և հաստատվել է, որ սոցիալական ցանցերից կախվածությունն առաջացնում է որոշակի վարքային փոփոխություններ՝ ագրեսիվ վարք, կոնֆլիկտայնություն, դելիկվենտ վարք, ինչպես նաև՝ սուիցիդալ վարք:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Հայաստանում սոցիալական ցանցերից կախվածության ուսումնասիրությունը հանդիսանում է կարևոր և արդիական հիմնախնդիր, որը պահանջում է հատուկ մասնագիտական ուշադրություն հոգեբանների կողմից: Կախվածություն ունի դեռահասների 65%-ը, որը Հայաստանի համար բարձր ցուցանիշ է:
2. Սոցիալական ցանցերը մի շարք ռիսկեր են պարունակում դեռահասների համար, որոնցից առաջնայինը խաղերն են և վիրտուալ ծանոթությունները:
3. Սոցիալական ցանցերում տարածված խաղերը պարունակում են ագրեսիա և կարող են բացասաբար անդրադառնալ դեռահասների հոգեկան առողջության վրա:
4. Սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող դեռահասներն ավելի հակված են բռնկվողականության, հարձակվողականության, անզիջողականության, անհարմարվողականության, վրեժխնդրության և անհանդուրժողականության, քան չունեցողները:
5. Կախվածություն ունեցող դեռահասների մոտ առկա են անձնային առանձնահատկություններ՝ բարձր լայնախոհություն և նեյրոտիզմ, իսկ մարդամոտությունն ու էքստրավերսիան նվազում է տարիքի և սոցիալական ցանցերից կախվածության աճին զուգահեռ:
6. Սոցցանցերից կախվածություն ունեցող դեռահասներն ավելի հակված են ունենալ շեղվող վարքի հետևյալ տեսակները՝ սոցիալապես պայմանավորված վարքը, դելիկվենտ վարքը, ադիկտիվ վարքը, ագրեսիվ վարքը և սուիցիդալ վարքը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից,

հավելվածից, 9 աղյուսակից և 15 գծապատկերից: Ծավալը կազմում է 151 տպագիր էջ, առանց հավելվածի՝ 131 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության ընտրակազմը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Համացանցային կախվածության հիմնախնդիրը հոգեբանական գիտության համատեքստում»**, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Համացանցային կախվածություն» հասկացությունը, նշաններն ու ախտանշանները», ներկայացված է «համացանցային կախվածություն» եզրույթի էությունը, դրա ձևավորման ու զարգացման պատմությունը, ինչպես նաև նկարագրված են այս կախվածության հիմնական նշաններն ու ախտանշանները: Հենվելով տարբեր հեղինակների կողմից առաջարկված համացանցային կախվածության մեկնաբանությունների և սահմանումների վրա՝ ներկայացված է այս երևույթի մեր սահմանումը:

Առաջին գլխի երկրորդ՝ «Համացանցային կախվածություն ուսումնասիրությունը հոգեբանական գիտության մեջ» ենթագլխում ներկայացված և վերլուծության է ենթարկված ադիկտիվ վարքի վերաբերյալ Ց. Կորոլենկոյի, Վ. Մենդելևիչի, Է. Ազարովայի, Ա. Բանդուրայի, Ի. Ս Կոնի, Ա. Ադլերի, Զ. Ֆրեյդի, Է. Ֆրոմի, Է. Էրիքսոնի և այլոց մոտեցումներն ու հայեցակարգերը:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում քննարկվում են սոցիալական ցանցերից կախվածության դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները՝ մասնավորապես սոցիալական ցանցերի առավելությունները, բացասական ազդեցությունները և հնարավոր վտանգները, որոնք կարող են անդրադառնալ մարդու կյանքի որակի և սոցիալական փոխհարաբերությունների վրա: Անդրադարձ է կատարված այնպիսի երևույթների, ինչպիսիք են՝ անձնական տեղեկությունների տարածումը, համացանցային խաբեությունները, վիրտուալ ժամադրությունները, ոչ պատշաճ բովանդակությամբ նյութերը, կիբերբուլինգը և թրոլինգը:

Ատենախոսության երկրորդ **«Դեռահասների հոգեբանական բնութագիրը»** գլխի առաջին ենթագլխում՝ «Դեռահասների հոգեբանական առանձնահատկությունները և ճգնաժամերի տեսությունները», ներկայացված են տարբեր հեղինակների՝ Լ.Ս. Վիգոտսկու, Դ. Էլկոնինի, Լ. Ի. Բոժովիչի, Զ. Ֆրոյդի, Ա. Ֆրոյդի, Է. Էրիքսոնի, Ժ. Պիաժեի, Ի. Կոնի, Ս. Հոլլի, տեսություններն ու մոտեցումները դեռահասության շրջանի վերաբերյալ: Բացի դասական տեսություններից, ուսումնասիրվել են նաև ժամանակակից մոտեցումներն ու վերջին հետազոտությունները:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «Դեռահասների դեստրուկտիվ վարքի դրսևորման հոգեբանական բնութագիրը» ենթագլխում անդրադարձ է կատարված դեստրուկտիվ վարքի առանձնահատկություններին: Ներկայացված են Ռ. Բեսթի, Զ. Ֆրոյդի, Ա. Բանդուրայի, Մ. Նոքի և այլ հեղինակների տեսություններն ու մոտեցումները դեստրուկտիվ վարքի վերաբերյալ: Առանձնացվել են դեռահասներին բնորոշ դեստրուկտիվ վարքի հետևյալ նախանշանները, նշաններն ու ախտնշանները: Մանրամասն նկարագրվել են սուիցիդալ և ոչ սուիցիդալ ինքնավնասման առանձնահատկությունները, քանի որ վերջին ժամանակներս դեռահասների ինքնավնասման տագնապալի աճ է գրանցվել սոցցանցերում տարածված մարտահրավերների արդյունքում:

Երկրորդ գլխի երրորդ՝ «Սոցիալական ցանցերի բացասական մարտահրավերները, դեստրուկտիվ խաղերի տեսակներն ու առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված են վիրտուալ խաղերի հիմնական տեսակները, դրանց առանձնահատկություններն ու հնարավոր բացասական ազդեցությունները խաղացողների հոգեկանի վրա: Վերլուծության են ենթարկվել առավել տարածված վտանգավոր մարտահրավերները, որոնք հանգեցրել են ինքնավնասման, կոնֆլիկտների և նույնիսկ մահվան դեպքերի:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում կատարված է դեռահասների դեստրուկտիվ վարքի վիճակագրական վերլուծություն: Ներկայացված է վերջին տարիներին ՀՀ-ում գրանցված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի դեպքերի բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի, անչափահասների կողմից կամ մասնակցությամբ գրանցված հանցագործությունների քանակը, ինչպես նաև քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասների թվաքանակն ըստ հանցատեսակների:

Ատենախոսության երրորդ՝ **«Սոցիալական ցանցերից կախվածության ուսումնասիրման փորձարարական հետազոտություն»** գլխում ներկայացված են իրականացված հետազոտությունների ընթացքը և ստացված տվյալների վերլուծությունը, որոնց արդյունքները զետեղված են բազմաթիվ աղյուսակներում և գծապատկերներում:

Երրորդ գլխի առաջին՝ «Հետազոտության կազմակերպումը և մեթոդիկան» ենթագլխում ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդները ու ներգրավված ընտրակազմը: Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված մեթոդների և մեթոդիկաների էությունը, նպատակահարմարությունը և բնութագրերը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում կատարված է հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը: Անդրադարձ է կատարվել կիրառած մեթոդներից և մեթոդիկաներից յուրաքանչյուրի արդյունքում ստացված տվյալներին: Հետազոտությանը մասնակցել է մասնակցել է 165 դեռահաս՝ 90 աղջիկ, 75 տղա: Հետազոտության առաջին փուլում կիրառվել է Ք. Յանգի համացանցային կախվածության թեստը, որի արդյունքների հիման վրա

առանձնացվել են բարձր, միջին, ցածր կախվածություն ունեցող աղջիկներն ու տղաները: Թեստի արդյունքները ցույց են տվել որոշակի օրինաչափություն. տարիքի աճին զուգընթաց աճում է նաև համացանցից կախվածության մակարդակը:

Իրականացվել է **հոգեբանական զրույց** հետազոտության մասնակիցների հետ, որի արդյունքում կատարվել են հետյալ եզրակացությունները.

- Հետազոտությանը մասնակցած բոլորը դեռահասները օգտվում են սոցիալական ցանցերից, ընդ որում՝ գրանցված են առնվազն մեկ սոցիալական ցանցում, իսկ շուրջ 85%-անձնական էջ ունի երեք և ավելի սոցիալական ցանցում:
- Սոցիալական ցանցերում աղջիկներին գրավում է նկարներով կիսվելու կամ նկարներ դիտելու գործընթացը, իսկ տղաներին՝ խաղեր խաղալն ու տեղեկատվություն ստանալը:
- Սոցիալական ցանցերը մի շարք ռիսկեր են պարունակում դեռահասների համար, որոնցից առաջնայինը վիրտուալ ծանոթություններն են:
- Դեռահասներն ունեն օնլայն ընկերներ և վտանգը հնարավոր է, որ տեղափոխվի վիրտուալ աշխարհից իրական աշխարհ:
- Տղաների դեպքում առկա է խաղային կախվածության ձևավորման ռիսկ, որը կարող է հանգեցնել դեստրուկտիվ վարքի ձևավորման, քանի որ նախընտրելի խաղերն իրենց մեջ պարունակում են ագրեսիվ գործողություններ, ըստ էության՝ ամենատարածվածը մարտախաղերն են:

Դիտման մեթոդի կիրառման միջոցով ստացել ենք արժեքավոր տեղեկություններ հետազոտվող դեռահասների վարքային դրսևորումների և անձնային հատկանիշների վերաբերյալ: Նկատվել է, որ դասապրոցեսը հանդիսանում է զսպող գործոն, սակայն, այդուհանդերձ, կախվածություն ունեցող աշակերտները նախընտրում են համացանցը, ինչը խանգարում է դասապրոցեսի արդյունավետ ընթացքին:

Ներկայացված է սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող երկու դեռահասների **դեպքի ուսումնասիրություն**, որտեղ նկատվել են որոշակի ընդհանրություններ. սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող անձանց մոտ կարող է առկա լինել ժամանակի ոչ օբյեկտիվ գնահատում, որի արդյունքում նրանք շատ ավելի երկար ժամանակ են անցկացնում համացանցում, քան իրենց թվում է: Առկա են այնպիսի ախտանշաններ, ինչպիսիք են՝ անքնությունը, դյուրագրգռությունը, մեկուսացվածությունը, ինչպես նաև ոչ առցանց կյանքի հանդեպ հետաքրքրության բացակայությունը:

Անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդի հարցերին պատասխանել է 70 ուսուցիչ և ծնող: Հարցվողների 82%-ը նշել է, որ սոցիալական ցանցերում ներգրավվածությունը բացասական է անդրադառնում աշակերտների հոգեկան առողջության վրա և ավելի շատ խանգարում է ուսումնական գործընթացին, քան՝ օգնում: Հարցվողների մեծամասնությունը նշել է նաև, որ եթե

դեռահասները հնարավորություն չեն ունենում օգտվել համացանցից, ապա դրսևորում են ագրեսիվ:

Հետազոտության առաջին փուլի արդյունքների հիման վրա առանձնացվել է երկու խումբ՝ փորձարարական (n = 107), որից 58 աղջիկ և 49 տղա, և ստուգիչ (n = 58), որից 32 աղջիկ և 26 տղա: Կիրառվել է **«Անձնային ագրեսիվություն և կոնֆլիկտայնություն»** մեթոդիկան, որի արդյունքները ներկայացված են առանձին՝ յուրաքանչյուր խմբի աղջիկների և տղաների համար: Այս մեթոդիկան ցույց է տվել, որ փորձարարական խմբի թե՛ աղջիկների, թե՛ տղաների մոտ նկատվում է ավելի բարձր բռնկվողականություն, հարձակվողականություն, անզիջողականություն, անհարմարվողականություն, վրեժխնդրություն և անհանդուրժողականություն: Ստացված տվյալների հիման վրա որոշվել է դրական ագրեսիվության, բացասական ագրեսիվության և կոնֆլիկտայնության ցուցանիշները: Կատարվել է ստացված ցուցանիշների համեմատական վերլուծություն: Ըստ t-թեստ վիճակագրական վերլուծության արդյունքների՝ որոշվել է նաև հավաստիության P գործակիցը: Տարբերությունը եղել է վիճակագրորեն հավաստի՝ $P \leq 0,05$: Պարզվել է, որ սոցցանցերից կախվածություն ունեցողների ընդհանուր կոնֆլիկտայնության ու ագրեսիվության հակվածությունը բարձր է ստուգիչ խմբից:

Մեծ հնգյակ (NEO-FFI) թեստի արդյունքները ցույց են տվել, որ փորձարարական խմբի աղջիկների մոտ բարձր է լայնախոհությունը, որ կայուն կերպով աճում է 12-ից մինչև 17 տարեկան, սակայն էքստրավերսիան և մարդամոտությունը աստիճանաբար նվազում է: Ստուգիչ խմբի աղջիկների մոտ, ի տարբերություն փորձարարական խմբի, բարձր է էքստրավերսիան (17 տարեկանում կազմում է 73%) և մարդամոտությունը (17 տարեկանում՝ 45%): Բարեխղճությունը ևս ավելի բարձր է բոլոր տարիքային խմբերում: Սակայն ստուգիչ խմբի մոտ լայնախոհության ցուցանիշը զիջում է փորձարարական խմբին: Նեյրոտիզմը, թեև տարիքին զուգընթաց աճում է, սակայն ավելի թույլ է արտահայտված, քան փորձարարական խմբի մոտ: Համեմատելով տղաների փորձարարական և ստուգիչ խմբերի տվյալները՝ ստանում ենք, որ նեյրոտիզմն ու լայնախոհությունը բարձր է փորձարարական խմբի մոտ, իսկ էքստրավերսիան, մարդամոտությունն ու բարեխղճությունը՝ ստուգիչ խմբի մոտ: Նեյրոտիզմը բարձր է փորձարարական խմբի մոտ՝ 12 տարեկանում՝ 7%-ով, 17-ում՝ 5%-ով: Լայնախոհությունը ևս բարձր է փորձարարական խմբի մոտ՝ 12 տարեկանում 3%-ով, 17-ում՝ 7%-ով: Փորձարարական խմբի էքստրավերսիան, մարդամոտությունը և բարեխղճությունը զիջում է ստուգիչ խմբին:

Կիրառվել է **Անչափահասների շեղվող վարքի ախտորոշման** մեթոդիկան (Է. Վ. Լեուս): Գծապատկեր 1-ը ցույց է տալիս մեթոդիկայի արդյունքները փորձարարական խմբի աղջիկների համար, իսկ Գծապատկեր 2-ը՝ անչափահասների շեղվող վարքի ախտորոշման մեթոդիկայի արդյունքները ստուգիչ խմբի աղջիկների համար:



Գծապատկեր 1. Անչափահասների շեղվող վարքի ախտորոշման մեթոդիկայի արդյունքները փորձարարական խմբի աղջիկների համար

Համեմատելով այս երկու գծապատկերների տվյալները՝ կարող ենք նկատել, որ շեղվող վարքի ցուցանիշները զգալիորեն բարձր են փորձարարական խմբի աղջիկների մոտ: 12 տարեկանում բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 9), ադիկտիվ վարքը (Δ = 23), ագրեսիվ վարքը (Δ = 11): 13 տարեկանում փորձարարական խմբի մոտ բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 4), դելիկվենտ վարքը (Δ = 1), ադիկտիվ վարքը (Δ = 23), ագրեսիվ վարքը (Δ = 12), սուիցիդալ վարքը (Δ = 1), 14 տարեկանում՝ սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 5), դելիկվենտ վարքը (Δ = 1), ադիկտիվ վարքը (Δ = 24), ագրեսիվ վարքը (Δ = 12), սուիցիդալ վարքը (Δ = 1), 15-ում՝ սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 6), դելիկվենտ վարքը (Δ = 2), ադիկտիվ վարքը (Δ = 21), ագրեսիվ վարքը (Δ = 14), սուիցիդալ վարքը (Δ = 1), 16-ում՝ սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 2), դելիկվենտ վարքը (Δ = 1), ադիկտիվ վարքը (Δ = 20), ագրեսիվ վարքը (Δ = 20), սուիցիդալ վարքը (Δ = 2), 17 տարեկանում՝ սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 2), դելիկվենտ վարքը (Δ = 1), ադիկտիվ վարքը (Δ = 24), ագրեսիվ վարքը (Δ = 16), սուիցիդալ վարքը (Δ = 1): Վիճակագրական վերլուծության արդյունքում պարզվել է, որ տարբերությունը եղել է վիճակագրորեն հավաստի:



Գծապատկեր 2. Անչափահասների շեղվող վարքի ախտորոշման մեթոդիկայի արդյունքները ստուգիչ խմբի աղջիկների համար

Գծապատկեր 3-ը արտացոլում է անչափահասների շեղվող վարքի ախտորոշման մեթոդիկայի արդյունքները փորձարարական խմբի տղաների համար, իսկ Գծապատկեր 4-ը՝ ստուգիչ խմբի տղաների համար:



Գծապատկեր 3. Անչափահասների շեղվող վարքի ախտորոշման մեթոդիկայի արդյունքները փորձարարական խմբի տղաների համար

Ընդհանուր առմամբ, սոցիալապես պայմանավորված վարքը տղաների դեպքում ավելի ցածր է աղջիկների համեմատությամբ, սակայն տղաների մոտ բարձր է ադիկտիվ և ագրեսիվ վարքը: Փորձարարական խմբի մոտ հատկապես բարձր են ադիկտիվ և ագրեսիվ վարքի ցուցանիշները: Համեմատենք Գծապատկեր 3-ը և Գծապատկեր 4-ը տղաների նշված երկու խմբերի միջև եղած տարբերությունը բացահայտելու նպատակով: 12 տարեկան տղաների փորձարարական խմբի մոտ, ի տարբերություն ստուգիչ խմբի, ավելի բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 7%), դելիկվենտ վարքը երկու խմբերում էլ բացակայում է, ադիկտիվ վարքը (Δ = 15%), ագրեսիվ վարքը (Δ = 8%), սուիցիդալ վարքը երկու խմբերում էլ բացակայում է: 13 տարեկանների փորձարարական խմբի մոտ բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 8%), դելիկվենտ վարքը (Δ = 2%), ադիկտիվ վարքը (Δ = 16%), ագրեսիվ վարքը (Δ = 6%), սուիցիդալ վարքը (Δ = 1%): 14 տարեկանների փորձարարական խմբի մոտ բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 7%), դելիկվենտ վարքը (Δ = 3%), ադիկտիվ վարքը (Δ = 14%), ագրեսիվ վարքը (Δ = 7%), սուիցիդալ վարքը (Δ = 1%): 15 տարեկանների փորձարարական խմբի մոտ բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 4%), դելիկվենտ վարքը (Δ = 4%), ադիկտիվ վարքը (Δ = 12%), ագրեսիվ վարքը (Δ = 9%), սուիցիդալ վարքը (Δ = 2%): 16 տարեկանների փորձարարական խմբի մոտ բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ = 4%), դելիկվենտ վարքը (Δ = 5%), ադիկտիվ վարքը (Δ = 15%), ագրեսիվ վարքը (Δ = 11%), սուիցիդալ վարքը (Δ = 1%): 17 տարեկանների փորձարարական խմբի մոտ բարձր է սոցիալապես պայմանավորված վարքը (Δ=3%), դելիկվենտ վարքը (Δ = 5%), ադիկտիվ վարքը (Δ = 17%), ագրեսիվ վարքը (Δ = 16%), սուիցիդալ վարքը (Δ = 2%): Փորձարարական և ստուգիչ խմբերի ցուցանիշների

միջև եղած տարբերության հավաստիությունը տղաների դեպքում ևս փաստվել է t-թեստի միջոցով:



Գծապատկեր 4. Անչափահասների շեղվող վարքի ախտորոշման մեթոդիկայի արդյունքները ստուգիչ խմբի տղաների համար

Այսպիսով թե՛ աղջիկների, թե՛ տղաների փորձարարական խմբի մոտ շեղվող վարքի ցուցանիշները գերազանցում են ստուգիչ խմբի նույն ցուցանիշներին, ինչը ցույց է տալիս, որ սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող դեռահասները հակված են ունենալ շեղվող վարք:

Կատարվել է մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն Կ. Պիրոսոնի առաջադրած գծային համահարաբերակցության գործակցի հաշվարկման բանաձևով: Ըստ վիճակագրական վերլուծության արդյունքների՝ սոցցանցերից կախվածության և շեղվող վարքի միջև առկա է սերտ համահարաբերակցություն (Աղյուսակ 1):

Համահարաբերակցություն	**Աղջիկներ (r)**	**Տղաներ (r)**
ՍՑԿ և սոցիալապես պայմանավորված վարք	-0.28	0.87
ՍՑԿ և դելիկվենտ վարք	0.94	0.96
ՍՑԿ և ադիկտիվ վարք	0.94	0.90
ՍՑԿ և ագրեսիվ վարք	0.98	0.92
ՍՑԿ և սուիցիդալ վարք	0.86	0.89

Աղյուսակ 1. Սոցիալական ցանցերից կախվածության և շեղվող վարքի համահարաբերակցության վերլուծության աղյուսակ

Այսպիսով, փորձարարական հետազոտության արդյունքներով կարող ենք եզրակացնել, որ դեռահասության տարիքում սոցիալական ցանցերից կախվածությունը հանդիսանում է դեստրուկտիվ վարքի տեսակ:



Գծապատկեր 5. Սոցիալական ցանցերից կախվածության (ՍՑԿ) և շեղվող վարքի փորձարարական հետազոտության արդյունքներով հայտնաբերված համահարաբերակցությունները

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ՝ «Հոգեբանական խորհուրդներ և մեթոդական ցուցումներ» ենթագլխում ներկայացված է Երևանի թիվ 79 հիմնական դպրոցում և թիվ 115 ավագ դպրոցում իրականացված լուսավորչական աշխատանքի ընթացքը: Ծնողներին և ուսուցիչներին տրամադրվել է ուղեցույց դեռահասների սոցիալական ցանցերից կախվածության նախնական կանխարգելման վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և փորձարարական վերլուծության արդյունքների հիման վրա հանգել ենք հետևյալ **եզրակացություններին**.

1. Կախվածությունը մի կողմից մարդու ազատ, կամավոր ընտրությունն է, իսկ մյուս կողմից՝ սահմանափակում է նրա հնարավորություններն ու ինքնազարգացման պոտենցիալը, դառնում է առաջնային պահանջմունք և անհատական կողմնորոշում: Այն պաթոլոգիական, անդիմադրելի ցանկություն է, որտեղ վճռորոշ է տևողությունը, ինչպես նաև՝ ստեղծում է հոգեբանական, սոցիալական, կրթական և աշխատանքային դժվարություններ մարդու կյանքում:
2. Գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ դեռահասության շրջանը ճգնաժամային է, և դեռահասների տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները նրանց խոցելի են դարձնում շրջապատող աշխարհի բացասական ազդեցությունների հանդեպ: Անձը փորձում է գտնել իրեն և իր տեղը կյանքում, ձեռք բերել անկախություն ծնողներից,

սակայն հակասություն է առաջանում ֆիզիկական, սոցիալական և հոգեկան զարգացման միջև, քանի որ դեռահասները հասնում են ֆիզիկական հասունության որոշակի մակարդակի, սակայն չունեն անհրաժեշտ կենսափորձ: Սոցիալական ցանցերն, իրենց հերթին, պարունակում են ինչպես առավելություններ, այնպես էլ՝ վտանգներ: Հետևաբար, դեռահասների կողմից սոցիալական ցանցերի կիրառումը առավել ռիսկային է, քան՝ չափահասների:

3. 12-17 տարեկան դեռահասների շրջանում սոցիալական ցանցերից կախվածություն ունեցողների թիվը բարձր է՝ շուրջ 65%, որը Հայաստանի Հանրապետության համար, կարծում ենք, բարձր ցուցանիշ է: Բացի այդ, սոցցանցերից կախվածությունն աստիճանաբար աճում է տարիքի աճին զուգահեռ ինչպես աղջիկների, այնպես էլ՝ տղաների շրջանում:
4. Սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող և չունեցող դեռահասների հետ անց կացված հետազոտությունների համեմատական վերլուծությունը թույլ տվեց բացահայտել, որ առկա են դեռահասների սեռային և անձնային առանձնահատկությունների տարբերություններ: Մասնավորապես, աղջիկներն ու տղաները տարբեր նպատակներով են կիրառում սոցիալական ցանցերը և ունեն տարբեր հետաքրքրություններ ու ակնկալիքներ: Աղջիկներն ավելի շատ հետաքրքրված են նկարներ դիտելով ու տեղադրելով, որի հիմքում ընկած է հավանության արժանանալու պահանջմունքը, իսկ տղաներին գրավում է սոցիալական ցանցերի ընձեռած արագ շփման և տեղեկատվություն ստանալու հնարավորությունը: Աղջիկների և տղաների շրջանում տարբեր են նաև խաղային հետաքրքրությունները. տղաներն ավելի հակված են խաղային կախվածության ձևավորման, քան՝ աղջիկները:
5. Հետազոտությունը ցույց տվեց, որ սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող դեռահասներն ավելի հակված են ունենալ սոցիալապես պայմանավորված վարք, դելիկվենտ վարք, ադիկտիվ վարք, ագրեսիվ վարք և սուիցիդալ վարք, քան՝ չունեցողները:
6. Սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող դեռահասների մոտ, ի տարբերություն ստուգիչ խմբի, ավելի բարձր է բռնկվողականությունը, հարձակվողականությունը, անզիջողականությունը, անհարմարվողականությունը, վրեժխնդրությունը և անհանդուրժողականությունը: Ավելի բարձր է արտահայտված նաև լայնախոհությունը և նեյրոտիզմը, իսկ մարդամոտությունն ու էքստրավերսիան ավելի բարձր է այն դեռահասների մոտ, ովքեր չունեն կախվածություն:
7. Գոյություն ունի սերտ համահարաբերակցություն սոցիալական ցանցերից կախվածության և սոցիալապես պայմանավորված վարքի, դելիկվենտ վարքի, ադիկտիվ վարքի, ագրեսիվ վարքի և սուիցիդալ վարքի միջև:
8. Ծնողների ու աշակերտների համար դպրոցում պետք է ժամանակ առ

ժամանակ կազմակերպվեն սեմինարներ, որտեղ կներկայացվի տեղեկատվություն սոցցանցերից կախվածության հիմնախնդրի վերաբերյալ, տրվեն հոգեբանական խորհուրդներ և գործնական առաջարկություններ կանխարգելման նպատակով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1. Իսկաջյան Ա. Հ., Ավետիսյան Մ. Ս., Դեռահասների կողմից սոցիալական ցանցերի կիրառման նպատակների հետազոտություն, Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, №18, 2025, ISSN:1829-4480, էջ 379-390:
2. Iskajyan A. H.,The Influence of Social Media Addiction on Mental Health and Academic Performance, Շիրակի Մ. Նալբանդյանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Բ, № 2, 2024, ISSN: 2738-2559, էջ 291-302:
3. Iskajyan A. H., The Relationship between Social Media Addiction and Personality Traits among Adolescents, Գիտական Արցախ, № 3 (22), 2024, ISSN 2579-2652 (Print), ISSN: 2738-2672 (online), էջ 178-187:
4. Իսկաջյան Ա.Հ., Սոցիալական ցանցերից կախվածության ազդեցությունը դեռահասների շեղվող վարքի վրա, Հոգեկան առողջության հայկական հանդես, 15 (2), 2024, ISSN: 1829-202X, էջ 20-29:
5. Իսկաջյան Ա. Հ., Սոցիալական ցանցերից կախվածության և ագրեսիվ վարքի փոխհարաբերությունը, Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես, #1, հատոր IV, 2024, ISSN: 2738-2737, էջ 65-72:
6. Իսկաջյան Ա. Հ., Ավետիսյան Մ. Ս., Կոնջոյան Հ. Ա., Համացանցային դեստրուկտիվ խաղերի ազդեցությունը դեռահասների հոգեկան առողջության վրա, Շիրակի Մ. Նալբանդյանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Բ, № 1, 2024, ISSN: 2738-2559, էջ 134-142:
7. Avetisyan M., Iskajyan A., Positive and Negative Effects of Social Media on Adolescent Psychological Development and Behavior, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, «Կաճառ» գիտական պարբերական, Համար 1, 2024, ISSN: 2579-2903, էջ 40-52:
8. Iskajyan A.H., Cyberbullying and its impact on self-harm in adolescents, Институт психологии Российской академии наук, Учёные записки Института психологии РАН, Том 4. № 3(13), 2024, ISSN: 3034-378X, с. 89-95:
9. Iskajyan A.H., The concept of Internet addiction: signs, symptoms and stages, Организационная психолингвистика, №1 (25), 2024, ISSN: 2619–0273, с. 11-25:

10. Iskajyan A.H., Psychological Impact of Dangerous Online Challenges on Adolescents: A Case Study, Lurian Journal, Vol. 5. No. 2, 2024, ISSN: 2949-6373, pp. 59-66:
11. Avetisyan M., Iskajyan A., Babayan U.,The role of inspiration on social media addiction, Национальный государственный университет физической культуры, спорта и здоровья имени П. Ф. Лесгафта. Санкт-Петербург, 2024. с. 80–83:
12. Իսկաջյան Ա.Հ., Համացանցային կախվածության հիմնախնդիրը դեռահասության շրջանում, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները, Գիտական հոդվածների ժողովածու, 2024, էջ 408-418:

ИСКАДЖЯН АРМИНЕ ОГАНЕСОВНА
ЗАВИСИМОСТЬ ПОДРОСТКОВ ОТ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ КАК ВИД ДЕСТРУКТИВНОГО ПОВЕДЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 - «Социальная психология». Защита диссертации состоится 10 декабря 2025 года в 12:00 на заседании специализированного совета по психологии 064 КВОН при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (0010, г. Ереван, Тигран Меци 17).

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена тем, что в настоящее время социальные сети получили широкое распространение в обществе, и их чрезмерное использование может приводить к формированию зависимости, которая, в свою очередь, порождает деструктивные формы. Зависимость от социальных сетей в наибольшей степени угрожает подросткам, поскольку именно эта группа проявляет наибольшую активность в социальных сетях, что способно существенно влиять на их поведение, а также на физическое и психическое здоровье. Социальные сети воздействуют на поведение подростков, на формирование и развитие личности, а также на межличностные взаимоотношения. Следовательно, с учётом указанных обстоятельств, изучение проблемы зависимости от социальных сетей – как сравнительно нового вида зависимости – является более чем актуальным и необходимым.

Цель исследования: изучить зависимость подростков от социальных сетей как вид деструктивного поведения, а также иные виды деструктивного поведения и их взаимосвязь.

Задачи исследвания:

1. Изучить существующие подходы различных авторов к проблеме зависимости от социальных сетей и деструктивного поведения.
2. Проанализировать возрастные особенности подростков и теории кризисов.
3. Экспериментальным путём выявить и выделить подростков, зависимых от социальных сетей.
4. Провести сравнительный анализ между подростками, зависимыми и не зависимыми от социальных сетей, в аспекте проявлений деструктивного поведения.
5. Изучить взаимосвязи различных форм деструктивного поведения.
6. Разработать психологические рекомендации и практические предложения по профилактике зависимости от социальных сетей.

Гипотеза исследования: предполагается, что существует определённая взаимосвязь между зависимостью от социальных сетей и другими формами деструктивного поведения (суицидальное, делинквентное, агрессивное поведение, зависимость от онлайн-игр).

Научная новизна исследования: проведённое исследование представляет собой новизну в области социальной, возрастной, общей и клинической психологии. Впервые объектом научного изучения стали поведенческие особенности подростков, зависимых от социальных сетей. С другой стороны, впервые предметом научного анализа стало деструктивное поведение – различные формы поведенческих отклонений, а также психологические и социально-психологические закономерности их возникновения, развития и проявления. Изучены наиболее распространённые игры в социальных сетях, и выявлено, что они могут быть причиной агрессивного поведения. Также исследованы цели использования социальных сетей, при этом обнаружены значительные различия между девочками и мальчиками. Экспериментально подтверждено, что зависимость от социальных сетей вызывает определённые поведенческие изменения – агрессивность, конфликтность, делинквентное и суицидальное поведение.

Теоретическая и практическая значимость исследования: выявленные особенности, закономерности и проведённые анализы обогащают и дополняют как теоретические представления о социальных сетях, их психологических особенностях и механизмах формирования зависимости, так и знания об аддиктивном поведении подростков. Исследование способствует получению новых знаний, касающихся психологического воздействия и специфики социальных сетей, и даёт ответы на вопросы, которые в настоящее время особенно тревожат родителей, педагогов и специалистов в области психического здоровья относительно использования социальных сетей подростками. Полученные результаты могут служить диагностическим и профилактическим инструментом, а также помочь соответствующим специалистам и родителям быть более подготовленными и осведомлёнными при взаимодействии с подростками, страдающими зависимостью от социальных сетей.

Достоверность результатов определяется методологической обоснованностью исследования и соответствием его цели, гипотезе, задачам и применённым методам. Теоретические выводы основаны на всестороннем научном анализе экспериментальных данных.

Апробация и внедрение результатов исследования: результаты исследования были обсуждены на кафедре «Прикладной психологии» Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, на кафедре «Медицинской психологии» Ереванского университета «Айбусак», а также представлены на ряде международных научных конференций.

Структура диссертации: работа состоит из введения, трёх глав, заключения, списка литературы и приложения. Объём диссертации составляет 151 страницу, без приложений – 131 страницу.

По теме диссертации опгубликовано 12 статей.

ISKAJYAN ARMINE HOVHANNES

SOCIAL MEDIA ADDICTION AMONG ADOLESCENTS AS A TYPE OF DESTRUCTIVE BEHAVIOR

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03 - *Social Psychology". The dissertation defense will take place on December 10, 2025, at 12:00 PM, at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the The Higher Education and Science Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan (17 Tigran Mets, 0010, Yerevan).

SUMMARY

Actuality. The relevance of the research is determined by the fact that at present social media platforms have become widespread in society. Excessive use of social media may lead to addiction, which in turn gives rise to various forms of destructive behavior. Due to their frequent use of social media platforms, adolescents are highly vulnerable to addiction, which can affect their behavior, physical and mental health. Social media significantly influences adolescents' behavior, personality development, and interpersonal relationships. Therefore, taking into account the above-mentioned factors, the study of social media addiction, as a relatively new form of dependency, is of particular relevance and importance.

The research aims to examine social media addiction among adolescents as a form of destructive behavior, alongside other types of destructive behaviors, and to analyze the correlation between them.

The objectives of the research.

In order to achieve the aim of the research, the following objectives have been formulated:

1. To review the existing approaches of various authors regarding social media addiction and destructive behavior.
2. To analyze the age-related characteristics of adolescents in relation to theories of developmental crises.
3. To experimentally identify and classify adolescents exhibiting social media addiction.
4. To conduct a comparative analysis of destructive behaviors among adolescents with and without social media addiction.
5. To analyze the interconnections among various destructive behaviors.
6. To formulate psychological recommendations and practical strategies aimed at preventing social media addiction.

Research hypothesis.

It is hypothesized that a certain interconnection exists between social media addiction and various destructive behaviors, such as suicidal, delinquent, and aggressive behaviors as well as online gaming addiction.

Scientific novelty of the research.

The conducted study represents a novelty in the fields of social, developmental, general, and clinical psychology. For the first time, the behavioral characteristics of adolescents with social media addiction have become the subject of scientific research. On the other hand, for the first time, destructive behavior, various forms of behavioral deviation, and the psychological and socio-psychological patterns underlying their origin, development and behavioral manifestations have become the subject of scientific investigation. The research examined the most popular social media games and revealed that they may contribute to aggressive behavior among adolescents. The purposes of social media use were studied and substantial differences in social media usage between female and male adolescents were identified. Experimental research has demonstrated that social media addiction gives rise to specific behavioral alterations, including aggressive, conflict-prone, delinquent, and suicidal behaviors.

Theoretical and practical significance of the research.

The revealed characteristics, patterns, and conducted analyses enrich and complement both the theoretical understanding of social media, its psychological features, and the mechanisms of addiction formation, as well as the knowledge of adolescents' addictive behavior. The research will give new insights into the psychological effects and specific features of social media, providing answers to questions that are currently of serious concern among parents, educators, and mental health professionals about adolescent' social media use.

The obtained results can serve as diagnostic and preventive measures, enabling professionals and parents to be better prepared and informed when dealing with adolescents with social media addiction.

Credibility of results.

Reliability of the study findings is determined by their methodological validity and their correspondence to the research purpose, hypothesis, objectives and methods. The theoretical conclusions are based on a comprehensive scientific analysis of the experimental data.

Approbation and adoption of the research results.

The results of the research were discussed at the Department of Applied Psychology of Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, at the Department of Medical Psychology of Yerevan "Haybusak" University, as well as at several international scientific conferences.

Structure of the dissertation.

The work consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and appendices. The volume of the dissertation is 151, and 131 pages without appendices.

Twelve articles have been published on the topic of the dissertation.